

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Ամենապատիվ Տեր,

Մեծապես շոյված ենք ստանալով Ձեր հրավերը՝ մեր մասնակցությունը բերելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ազգային-Եկեղեցական Ժողովին:

Թույլ տվեք մեր շնորհավորանքը հղել Ամենայն Հայոց 131-րդ Հայրապետի առաջիկա ընտրությունների առթիվ և հույս հայտնել, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի նախաշեմին Ամենայն Հայոց Կաթողիկոս կընտրվի արժանիներից արժանին:

Ափսոսանքով տեղյակ ենք պահում, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անհետաձգելի լուծում պահանջող խնդիրների ստիպմամբ ի զորու չենք ներկա գտնվել, արդարև, կրոնական և ազգային պատմական մեծ նշանակություն ունեցող Ազգային-Եկեղեցական Ժողովին:

Խորին հարգանք՝

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ՝

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ստեփանակերտ,
1 ապրիլի 1995 թ.